ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

«ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԵՂՐԻ-2» ՓՈՔՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԷ №0606 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի հուլիսի 4-ի №296Ա որոշմամբ «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում, «Մեղրի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0606 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0606 լիցենզիա)՝ մինչև 2034 թվականի հոկտեմբերի 18-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 2-ը,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 28-ի №146Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) 16 ամսով երկարաձգվել է ԼԷ№0606 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 5 750 000 (հինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի հոկտեմբերի 17-ը գործողության ժամկետով,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 17-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 17-ի №ԳԲ/34.1-Մ2-5/2055-2021 գրությամբ,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը հայտնել է, որ ունի ֆինանսական դժվարություններ և աշխատանքներ են տարվում ֆինանսական միջոցներ հայթայթելու համար,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

1) 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին, Հանձնաժողովի որոշմամբ կամ գրությամբ սահմանված ժամկետում լիցենզավորված անձը Հանձնաժողով է ներկայացնում կարգին համապատասխան հաշվարկված երաշխիք,

2) 8.1-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 8-րդ կետին համապատասխան լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով երաշխիք չներկայացվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցվում է,

զ) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, և

հիմք ընդունելով Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8.1 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխան երաշխիք Հանձնաժողով չներկայացնելու համար կասեցնել ԼԷ №0606 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
---- հուլիսի 2021թ.